

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՓՈՔՐ ՍՈՎՐԱՏԻ ՇԵՂԵՆԱԿ

Ինչպէս յայտնի է, Սովկրատի եկեղեցական պատմութիւնը մեզ հասել է կրկնակի խմբագրութեամբ, ընդարձակ եւ համառօտ, կամ որպէս ընդունուած է անուանել՝ մեծ եւ փոքր Սովկրատ: Մեծ Սովկրատը թարգմանուած է յունարէնից Փիլոն Տիրակացու ձեռագրով 696 թուին: Իսկ ի՞նչ է փոքր Սովկրատը:

Փոքր Սովկրատի եւ Ոորենացու պատմութեան միջև կան անհամար առնչութեան կէտեր, եւ այնքան զգալի որ՝ մասնաւորապէս մէկի կախումը միւսից: Նորայրը կամենալով պաշտպանել պատմագոր աւանդակը, այն կարծիքն էր յայտնել որ փոքր Սովկրատը Նախնեաց հին թարգմանութիւն է եւ Ոորենացին օգտուել է ներքանից: Այնուհետեւ նախնիք զգալով որ փոքր Սովկրատը խիստ համառօտ է, ձեռնարկել են նորէն թարգմանելու 696 թուին: Այսպէս էր կարծում նաեւ Մխիթարեան յայտնի բանասէր, հանդուցեալ Հ. Բ. Սարգիսեան: Երկու Սովկրատներին փոխադարձ յարաբերութեան խնդիրը պէտք է պարզուէր յառաջ քան կարելի էր պատասխանել զրականորէն Ֆրանսացի գիտնական Կարբիէրի կողմէն յարուցած նոր կասկածներին Ոորենացու ժամանակի վերաբերեալ:

Էջմիածնի միաբան Մեսրոպ վարդապետը, այժմ արքեպիսկոպոս(«), հրատարակեց երկու Սովկրատները միասին 1897 թուին եւ ընդարձակ յառաջաբանում քննութեան առաւ օրուան հրատապ խնդիրը, ապացուցանելով որ Նորայր եւ Հ. Բ. Սարգիսեան սխալ են եւ որ մեծ Սովկրատն ա-

ւելի հին է քան փոքրը: Պարզեց մանաւանդ թէ ի՞նչ պայմաններում է ծագել փոքր Սովկրատը: Փիլոն Տիրակացու թարգմանութիւնը խիստ բառացի էր, ստրկական հետեւութիւն յոյն բնագրին ի վնաս Հայ լեզուի ողորկութեան, որով եւ զբուռար ընթերցող էր եւ շատ տեղ անհասկանալի: Ընթերցող հասարակութեան մատչելի անելու նպատակով հարկ են տեսել յունախոս թարգմանութիւնը հայացնել, վերածել աւելի կանոնաւոր եւ աւելի հայկարան խմբագրութեան: Եւ այս է փոքր Սովկրատը: Հետեւապէս աւելի ուշ է քան Մեծ Սովկրատը, ուշ քան 696 թիւը, Այս Հ. Մեսրոպ Մագիստրոսի խոշոր լուծման է Հայ բանասիրութեան: Նրա միւս դատողութիւնները Որենացու հարցի շուրջ՝ մեր ընեն եւ արդէն հնացած են, եւ մեր նպատակից էլ դուրս նրանց վերայ կանգ առնել: Ինչ որ մեզ հետաքրքրում է այն հարցն է, թէ ե՞րբ է խմբագրուել փոքր Սովկրատը: Հ. Մեսրոպի կարծիքով նա խմբագրուել է «շատ չանցած» բուն թարգմանութիւնից, զրեթէ միաժամանակ եւ խումբագրողը կամ համառօտողը հաւանորէն ինքը Տիրակացին է եղել (տ. յառաջաբան էջ 2 ա եւ 3գ): Վերջին ենթադրութիւնը ամեն պարագային անընդունելի է: Արդարեւ ի՞նչ կարիք կար թարգմանել բառ առ բառ եւ յետոյ նոր աշխատանք յանձն առնել թարգմանածը հայացնելու, փոխանակ սկզբից եւ ի՞նչ կանոնաւոր լեզուով թարգմանելու: Տիրակացին ամստան է փոքր Սովկրատին:

Մեծ եւ փոքր Սովկրատի յարաբերութեան խնդիրը մնում է ցարգ առկախ: Բանասէրները երկար եւ ջիւմ վիճարանուածիւնից յիտայ իրենց զեւքերը վայր զրին, մոռացութեան տալով հարցը, եւ ինչ որ զարմանալի է, նոցանից եւ ոչ մէկը չէր նկատել որ մասնագրական ստոյգ տեղեկութիւն կայ փոքր Սովկրատի խմբագրութեան եւ ժամանակի եւ հեղինակի մասին: Մխիթար Արիվանեցին իր ժամանակագրութեան մէջ հաղորդում է 641 թուի տակ (թիւր հարկաւ ճշտ չէ, եւ այս չէ կարեւորը)

«Փիլոն Տիրակացի. Յակոբ Ուռհայեցի արար զճո՞ր քարգմանութիւնս:

Հազիւ թէ բացատրութեան պէտք կայ:

(*) Ձեռք կարող յիշել մեր բարեկամի անունը առանց ցաւ յայտնելու այն անտեղի եւ անարդար ցոյցերի առթիւ, որոնց զոհ դարձրին հայ եկեղեցու պատկանելի ղեմերից մէկին, եւ պատճառ եղան կաշկանդելու նրա գործունէութիւնը մի այնպիսի ժամանակ երբ տարագիր հայտնիւր այնքան պէտք ունի գիտուն եւ փորձաւոր հովիւներին:

ժամանակագիրը յայտնում է որ այս ինչ թուին ֆիլոն տիրակալին թարգմանել է Սոկրատը և յիշում է զէջ որ Յակոբ Ուռ-հայեցի արել է երկրորդ թարգմանությունը այսինքն փոքր Սոկրատը: Մնում է պարզել թե՞ մի է Յակոբ Ուռհայեցին:

Հարցնենք Մատթէոս Ուռհայեցուն, որ պէտք է ճանաչել իր քաղաքակրթներին: Արդարև նա գիտէ մի Յակոբ գիտնական լորդադպետ որ կնքել է իր մանկանացուն խորին ձերութեան մէջ, Ուռհայում, հայոց 534=1085 թուին: Նոյն պատմիչն աւանդում է որ Յակոբը, որ կոչւում էր Գարոփնեցի և Սանահնեցի, մասնակցել է 1065 թուի դաւանաբանական վիճաբանութեան որ տեղի ունեցաւ մայրաքաղաքում, Դուկաս (կամ Դուկիձ) կայսրի հրամանով: Յակոբը մեծ դիմագրութիւն ցոյց տուեց հայրենի աւանդները պաշտպանելու համար, ըստ զսակաւ Քի յաղագս երկուութեան Քրիստոսի ի կողմն Հռոմոց դարձաւ, միաբանութեան զիր կազմեց և յանձնեց կայսրին: Այն պահուն սւացաւ զհանգուելի Գալիկ թագաւորը, պատահեց միաբանութեան թուղթը, պաշտպան հանդիսանալով Հայ եկեղեցու դաւանութեան:

Յակոբը աշակերտել էր Դիոսկորոս Սանահնեցուն, որ 1038 թուին կաթողիկոս ընտրուեց: Անշուշտ աշակերտել է Սանահնի վանքում և 1038 թուականից յառաջ: Ծննդեամբ Գարափնեցի, վանական կեանքով՝ Սանահնեցի, Յակոբը կոչւում է նաև Ուռհայեցի, այնտեղ իր կեանքի վերջին տարիները անցնելու պատճառով: Հաւանական է որ 1065 թուից յետոյ, երբ կասկածի տակ ընկաւ դաւանաբանական խնդրում, փոխադրուեց Ուռհա և անդ մեռաւ: Մատթէոս գովում է նրայ խոր գիտութիւնը և անուանում «այր հփոք կողմի»: Դատելով Մխիթար Այրիվանցուն նրա տուած Ուռհայեցի կոչումից պէտք է կարծիք, որ Սոկրատի համոզոտումը կատարել է Ուռհայում 1065-1085 տարիների շրջանում:

Յակոբը գիտուն էր և քաջ հայկաբան, կարողացել և սերտել էր հին մատենագրութիւնը, ինչպէս երևում է իր գործից, որ լի է հնրից քաղած տեքստով և դարձուածնեւրով և մասնաւորապէս շահաւէտած է Խորենացու բառամթերքը:

Դառնանք այժմ մեծ Սոկրատին: Եւրուսողէմի օրինակը պահել է հետեւեալ յիշատակարանը, զետեղուած ձեռագրի առաջին թղթի վրայ:

«Յանկ վեցհազարերորդի երկերերորդի չորրորդի կնքագրում անցաւորի օրպէս ունի ժամանակագրութիւն սուրբ Սոփի աւագ եկեղեցի տիեզերական մայրաքաղաքին Կոստանդնուպոլսի, եւ եւթն հարյուրերորդի չորրորդի քրիստոսի զաւսեանն և ի հարիւր քառասուն և ի չորս թուականին, ի յիններորդումն ընտրեցորդին, յառաջնում ամի թագաւորութեանն երկրորդ Ղեւոնի ինքնակալի Սւգոստոսի թորգմանեաց ֆիլոն Տիրակացի առաջին ձեռնարկքեանք զգիրս զայս մասնաւոր ծայրաքաղ ի Սոկրատայ եկեղեցական պատմութեանն, թողեալ զինքնախուսութիւնս և զթուղթս այլոց և զճառս յաղագս նուագութեան քարտի և մագաղաթի եղելոյ յատարութեան»:

Մեծ Սոկրատի երկու օրինակներն էլ ունին իրենց վերջը Սեղբեսարոսի վարքը, որի սկզբում կայ հետեւեալ յիշատակարանը: «Յառաջ քան զութուտան ամի թարգմանելոյ ֆիլոնի զգիրս զայս Սո(ս)կրատայ զեկեղեցական պատմութիւն թարգմանեալ էր Սրատուն Դիփգորի Ձորափութեայ թարգմանի ընդ փառաւորս յիշելոյ Ներսէս իշխանին փեսային Կամարակաւնաց զգիրս պատմութեան վարուց սրբոյն Սեղբեսարոսի եպիսկոպոսի Հռովմայ և կայր ի քարտախի: Այժմ պատշաճ համարեցաք առ զմին գրոց գրել ձեռամբ Թովմա զպրի պատրաստ լինելով մագաղաթին»:

Սոկրատի հրատարակիչ կարծում է որ երկու յիշատակարաններն էլ պատկանում են ֆիլոնի գրչին: Մինք համարիտ չենք: Փիլոնի հարազատ գրութիւնները չեն, այլ նրանց բովանդակութիւնը ամփոփած մի ուրիշ և յետին գրչով: Նշանները ականքն են:

Նախ խմբագրուած են երրորդ դէմքով որ յատուկ չէ բուն հեղինակներին:

«Յետոյ՝ առաջին ձեռնարկութիւնը՝ մատնում է անծանօթ գրչի ծանօթութիւնը երկրորդ ձեռնարկութեան կամ Յակոբի համառօտ խմբագրութեան: Եւ վերջապէս

Քրիստոսի գալստեան թուականը գործածական չէր ոչ միայն Փիլոնի ժամանակ, այլ և հետագայ դարերում:

Երկրորդ յիշատակարանը եւս հրորդդ ղէմքով է խօսում: Միայն վերջին նախադասութիւնը թրեւս մոռացմամբ պահել է ուռուլին ղէմքը: Եսթմ պատեհ համարեցաք:

Այս նկատողութիւնները տանում են այն եզրակացութեան որ Փիլոնի բուն յիշատակարանները չեն պահուած, այլ յետին զրիչներէլց մէկը ամփոփել է նրանց բովանդակութիւնը, և իր կողմէն աւելացրել է Քրիստոսի գալստեան թուականը Արեքսանդրեան տոմարով, հակառակ Փիլոնի զործ ուծած Կոստանդուպոլսի տոմարի: Արդարեւ ըստ վերջինս աշխարհի սկըզբից մինչեւ 696 թուականը համարուած է 6204, որ միանգամայն ստոյգ է, 6204—5508 = 696: Արեքսանդրեան տոմարը հաշուած է 5500 տարի եւ՝ 5508, ուստի անծոնթ գրիչը Քրիստոսի գալստեան թուականը գրել է 704, որ է 6204 — 5500 = 704, առանց նկատելու որ սա չի համաձայնում միւս թուերին՝ իններորդ ինգիկտոնին = 696 եւ Լեոն կայսրի առաջին տարուան = 696. Նոյն անծոնթ գրիչին են պատկանում եւ ընթիցիոն (փոխառնակ ինգիկտոնիւս և զուրուսան (փոխ. զուս և տասն) ուղղագրութիւնը: Գարս և ֆարեց կրկնակի ձեւերը եւ չեն կարող միեւնոյն գրչին ելած լինել: Պէտք է խոստովանել որ քարտի եւ մագաղաթին առաջին անգամ առով Սոկրատի պատմութեան ինչ ինչ մասերը չըթարգմանելը այնքան պարզ չէ. որովհետեւ նախ՝ մագաղաթ գտնելուն պէս, փոխանակ պակաս լրացնելու, Ձորափորեցու թարգմանութիւն է արտագրում, եւ երկրորդ՝ զժուար էր նախորդել թէ արդեօք արամագրերի քարտը պիտի բաւէր: Հակառակ ղէպքում ոպակսելի էր զործը վերջէն կիսատ մնալ և ոչ թէ դանապան հատուածները ղեղչելով: Մեզ թուած է Փիլոնը կատարել է իր թարգմանութիւնը Կոստանդնուպոլսում: Աստղիկէյ գիտենք որ Յուստինիան կայսրը իր պահակալութեան չորրորդ տարին Հայաստան արշաւեց, շատ իշխաններ իր հետը տարաւ որպէս պատանդ եւ նրանց թուած զգաթողիկոսն Հայոց զՍահակ հանգերծ է եպիսկոպոսոք արգելե-

նալ առ ինքնո, այսինքն տարաւ մայրաքաղաք: De Rebus Armeniis գրութիւնը հաստատում է որ կայսրը կանչեց Սահակ կաթողիկոսին եպիսկոպոսների հետ միասին մայրաքաղաք, ուր որ կաթողիկոսը ստորագրից մաւանարանական միութեան գիրը, բայց զիրժեց գիրը Հայաստան վերադառնալուց յետոյ: Յուստինիան զահարձարացաւ 685 սեպտեմբեր ամսին. չորրորդ տարին կը համապատասխանէ 689: Յիշեալ յոյն աղբիւրի ամաձայն կայսրը կանչեց կաթողիկոսին իր թագաւորութեան հինգերորդ տարին, ուրեմն 690 թուին: Հաւանարար կաթողիկոսը եւ հինգ եպիսկոպոսները հրաւիրած են եղել մասնակցել Տրուլլի ժողովին 692 թուին: Ժողովի արձանագրութիւնից երևում է որ Կարինի եւ Կեհարեի եպիսկոպոսները ստորագրել են ժողովի որոշումները: Բայց կաթողիկոսի եւ այլ հայ եպիսկոպոսների ստորագրութիւն չկայ: Թրեւս de Rebus Armeniis չափապանչում է նրանց թիքումը ղէպի միաբանութիւնը: Ժողովի մի քանի որոշումները հայ սովորութեանց ղէմ, թրեւս, բացատրելու է հայ եկեղեցականների ներկայութեամբ:

Հաւանական ենք համարում որ Փիլոն Տիրակապին կաթողիկոսի աւղիկիցնէրէն մին լինի, որ մնացել է Պոլսում, յունարէն սովորել և թարգմանել Սոկրատը այլապէս քանն: Այս ղէպքում հասկանալի կը դառնայ ոչ միայն զաւստրոքիանը այլ Պոլսական տոմարի և ինգիկտոնի կրթարկութիւնը առաջին անգամ հայ մատենագրութեան մէջ:

Քարտի նուագութիւնը, եթէ լոկ պատրուակ չէ, պէտք է բացատրել նրանով որ կաթողիկոսի վերադարձից յետոյ Փիլոն հնարաւորութիւն չի ունեցել քարտ կամ մագաղաթ հայթայթել: Դպրը Թովմայի պատրաստած մագաղաթը Փիլոնի ձեռքն է հասել իր Հայաստան վերադառնալուց յետոյ ուր և ընդօրինակել է Սեղբեստրոսի վարքը և կցել Սոկրատի պատմութեան:

Սոկրատի հրատարակիչը մի անհասկանալի սխալ է գործել, Գրիգոր Ձորափորեցու յիշատակարանի ձեռագրմանից ըստ փոխարինելով հերամանաւա-ի (էջ ԺԷ): Սխալուել է նաեւ կարծելով որ Ձորափորեցին թարգմանել է Սեղբեստրոսի վարքը

Ներսէս Կամարականի Կրամատով: Յիշատակարանի Ներսէսը Կամարական չէ այլ լոկ ափսոսյ Կամարականացո եւ իշխան վրաց. եւ Գրիգոր Զորափորեցիին նորա թարգմանն է: Այս Ներսէսը ծանօթ է այնուստ: Յովհաննէս Կաթողիկոսը (էջ 53, հրատ. էմիլի) նրան յիշում է մուսուլման զորավար Բասարայի հետ տնեցած ընդհարումի առթիւ, իսորայէլ Կաթողիկոսի օրով (668-678): Ներսէսը բուն վրաստանի իշխանն էր, այլ այն մասն որ վրացիք Սոմխեթի = Հայաստան են անուանում, իսկ հայերը՝ վրաց աշխարհ, այսինքն Գուգարքն, որի մէջ մտնում էր եւ Զորափորը, Գրիգոր թարգմանի ծննդավայրը: Ասել է թէ Գրիգորը աշխատել է իր իշխանի համար թարգմանելով Անգրեանտրոս վարքը, 678 թուին: Ասողիկ շփոթիւ է, ուշադրութեան վրէպումով, Զորափորեցու թարգմանութեան ժամանակը Փիլոնի հետ. որովհետեւ վերջինս թարգմանութիւնը համարում է կատարուած Անաստաս Կաթողիկոսի օրով եւ որա վեցամիսյ գահակալութիւնը դնում է (120 թ. հ. =) 671. մինչեւ 677, այն ինչ Անաստաս աթոռի վերայ էր 662-668ին(*). եւ Փիլոն թարգմանել է Սոկրատ 678ին, ուրեմն իսորայէլի ժամանակ: Փոքր Սոկրատի յիշատակարանը պարզեցնուած է մի խառը

(*) Այս շրջանի կաթողիկոսների ժամանակն որոշելու համար. հսկաստի կուռն է Գրիգոր Մամիկոնեանի մահուան տարին: Ըստ Կալանեաց գրքի Գրիգոր ընկաւ իսպուրաց արշաւանքում ձեռն թուին հայոց. սահմի 10, այսինքն 685 թ. Յուլիսի 5: Ասողիկը տալիս է ձեռն. որ գրչական սխալ է եւ հրատարակիչը կարող էր ուղղել. քանի որ նոյն պատմագիրը Գրիգորի յաջորդի՝ Աշտ պատրիկի իշխանութիւնն դնում է ձեռն. Թուին. Գրիգորի մահը տեղի ունեցաւ. ըստ Յովհաննէս Կաթողիկոսի, Սահակ Զորափորեցու 7րդ տարին (եւ ո՛չ 5րդ, ինչպէս Ասողիկի մօտ է). ուրեմն Սահակ գահակալել է 678 թուին. եւ նախորդն էր Իսայիլը (ըստ օմանց եղիւ, սխալ ընթերցման հետեւանքով) որ իշխեց 10 տարի, ուրեմն 668-678, իսկ սրանից առաջ Անաստասն էր, որի վեցամիսյ իշխանութիւնը ընկնում է 662-668: Սեբեոս իր պատմութիւնը հասցրել է մինչեւ Մուսուրայի յաղթանակը, 661 թուին, եւ չէ յիշում Ներսէս Կաթողիկոսի մահը: Հաւանական է որ միապետ ինի 662 թուի սկզբում, թողնելով աթոռը Անաստասին: Միւս կողմից Սահակ Զորափորեցին իշխել է 25 տարի կամ 26, ինչպէս հաշուում է քանիցս յիշած յայն աղբիւրը. հետեւապէս մինչեւ 703 կամ 704 թիւը: Վերջինս աւելի հաւանական է եւ համամայն է Ղեւոնդի տեղեկութեանց:

Թիւրիմացութիւն, որ պէտք ունի մեկնութեան: Հրատարակիչը փակագծի մէջ է առել յիշատակարանի մեծագոյն մասը, ինչպէս եւ վերջընթիւր գլուխը՝ ձեռն: Նա չէ նկատել որ վերջընթիւր գլուխն առնուած է ամբողջապէս Գրիգոր ԿԱԾԱՅԻՐԱՅԻՆ գործից, էջ 60: Այնտեղից է ծագում նաեւ ՍՈԿՐԱՏ, էջ 687 ծանօթութեան մէջ բերած հատուածը, որ գտնուում է փոքր Սոկրատի օրինակներից մէկում:

Ինչ վերաբերում է յիշատակարանին, փակագծի մէջ նշանակուած մեծ հատուածը ոչ այլ ինչ է իթէ ոչ մի ամփոփում մեծ Սոկրատի Զ. գրքի յառաջաբանի, էջ 486-487: Աւելորդ ենք համարում դէմ առ դէմ զննել մեծ Սոկրատի բնագիրը եւ փոքրի նոյն բնագրի ամփոփումը: Բաւական է միայն յիշել սկզբի ու վերջին նախագասութիւնը:

Մեծ Սոկրատի յառաջաբան Զ. գրքի, էջ 486.

«Բայց եղիցի մեզ մի փութալ առ պատմութիւնն, զմտաւ ածեալք որպէս զի թէ փութացուք գեղեցկաբանութեան հպել, քերես եւ ի քաց անկամիցիմք ի դիտմանէն...»

«Խառաջաբանի վերջը, Զ. Գրք. էջ 487. «Ձոր եւն սեսա(!) շարագրելով, զորս ի սեռողացն կարացի ուսանել ընթերցով զշնարհին, յորմէ ոչ փոխելն (զճշմարտին յորմէ ոչ փոխելն) ըստ պատմութեանն զպատմիկ զայսոսիկ, խորհրդաբար ինչ ճշմարտին ծանուցեալ լինէր քաղցն եւ յուղիկ պատմելոց եւ որոց աղքատեանն գոյով անեղոց գործով, իսկ տնանց յաւնեայնե առաւել արժանաւորելոց գիտել...»

Համեմատեցէք փոքր Սոկրատ, էջ 668.

«Բայց մի ոք մեզ մեղադրի լիցի (հ.մ. մեծ Սոկրատ յառաջաբան Ե. գլ. էջ 399, մի մեղադրեղ մեզ հիթէ), եւ ապաւորեղ թէ ըզպատմութիւնս սրբոց հարեանցի պատմելի եւ ոչ գեղեցկաբանութեամբ հպել ի գութութիւնս... քերես ի քաց անկամիցիմք ի դիտմանէն...»

Հատուածի վերջը.

«Ձոր եւ սեսի եւ զոր ի սեռողացն կարացի սեսանել. ընտրելով զեմարտին Եւրագրեցի, զոր ոչ փոխեալ ըստ պատմութեանն զպատմիկ խորհրդաբար ինչ եւ հմարտին ծանուցեալ լինի բազմաց եւ յուղիկ պատմելոց եւ յորոց աղքատի գոյով

աւելոյ գործովք, իսկ ումանց յամենայնեւ աւելել արժանաւորեցնց գիտել^(*)։

Փոքր Սոկրատի յիշատակորանից այս փոխառութիւնները հանկուց յետոյ կը մնայ իրեն սեպհական միայն վերջին մասը ուր խօսքը ուղղուած է Ներսէհ կամարականին, անուանելով նորան ապիւրկապատ պատրիկ, զովաբանում է և բարեմաղթում «գի և խաղաղութիւն Քրիստոսի քնակեացի ի քեզ առատապէս և յեկեղեցիս քն և յաշխարհի»։ Գի որոց ցանկացաւ պատմութեանս քարգմանել, ընդ նոյն ճանապարհ թագաւորաց գնասցեսա (չՋ 689-690)։

Փոքր Սոկրատի խմբագրելը նոյն սխալն է գործել ինչ որ իր նոր հրատարակիչը, Մհարոյ վարդապետը և հաւանորէն խմբագրիւր է որ մոլորեցրել է հրատարակչին։ Սակայն անտարակոյս է որ խմբագրիւր անուշագիր է եղել և կամարականներին փետային ընդունել է որպէս կամարական, իրենից ուղեցրել ապիւրկապատ պատրիկ տիտղոսը։ Թիւրիմացութիւնը բացատրելու է գրանով որ Ներսէհը, հայ թարգմանի միջոցով հայ թարգմանութիւններ պատուիրելուն համար, կարծուել է որ Ներսէհը կամարական տոհմից է։ Դուգարքի իշխանը յայտնի չէ թէ ի՞նչ ծագում ունէր։

(*) Փիլոնի թարգմանութիւնը անհասկանալի է։ Երեւում է որ յոյն քնագիրը լաւ չէ հասկացել և ստիպուած է եղել տալ նիւթական թարգմանութիւն։ Առաջին բառը՝ եղիցի սխալ է հասկացուած։ յուշարէն բառը նշանակում է՝ գիտցիւր։ Իմաստն է։

«Իրացիր որ մենք փոքր չունեցանք զեղեցկաբանութեան (և ո՛չ թէ պատմութեան), մտածելով որ եթէ ուշ դարձնէինք զեղեցկաբանութեան (կամ պերճախօսութեան) թերեւս շեղուէինք մեր դիտաւորութենէն»։

«Երեցի ինչ որ տեսի (տեսա՛, գրչի սխալ չէ, ինչպէս կարելի էր կարծել)։ այդպէս էր թարգմանել հեղինակը յունարէն բառը, որ ձեռով կրաւորական է բայց իմաստով ներգործական)։ և ինչ որ կարողացաւ իմանալ ականատեսներէից, ընտրելով ճշմարիտ փոքրանակ հետեւելու միեւնոյն բունը զանազանակիւր աւանդողներէ պատմութեանց, Հոգածութեամբ (և ո՛չ խորհրդաբար) վեր հանցի ճշմարտութիւնը, որովհետեւ բազումը էին որ պատմում էին այլեւայլ ձեւով որոնցից ոմանք ասում են որ ականատես են եղել իրողութեանց իսկ ուրիշները՝ որ ամենէն արժանաւատ են»։

Ներքին է որ Յակոբ Ուռուայեցին չի կարողացել յաղթանարել թարգմանութեան դժուարութիւնը և ըմբռնել իմաստը։

Եթէ վրացի էր արիւնով, թիրեւս հայերէն և գիտէր։ ուշագրութեան արժանի է նաև յիշատակարանի խօսքերը՝ «յիկեղեցիս քն և յաշխարհի», որից հետեւում է որ հեղինակը հեռու էր ապրում Ներսէհի իշխանութեան սահմաններից։ Այս պատճառով է միանգամայն Յակոբ Ուռուայեցուն։

Ներսէհը ներկայանում է որպէս «ցանկացող պատմութեան», որով հասկացում է ոչ միայն Սիդրեսարտոսի վարքը, այլ և Սոկրատի պատմութիւնը։ Յիշատակարանի հեղինակը, Յակոբ Ուռուայեցին, չի յիշում ոչ Գրիգոր Ձորագործիցու և ո՛չ Փիլոնի անունները, և կարծում է որ հրկուսն էլ կատարել են իրենց աշխատանքը միեւնոյն անձի՝ Ներսէհ կամարականի պատուէրով։ Նա գիտէր Ասողիկից, որ Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոսը գրել է ընթերցուածոց մեկնութիւնը Ներսէհ կամարականի հրամանով։ Երեւում է որ Գրիգոր Արշարունեաց եպիսկոպոսին և Գրիգոր Ձորագործիցուն նոյն անձն է համարել, ուստի և նոյնացրել է նմանապէս իրանց տէրերին՝ Ներսէհ վրաց իշխանին և Ներսէհ կամարականին։ Ամէն պարագային Ներսէհ կամարականը չէր կարող պատուիրել փիլոնի գործը, քանի որ 696 թուին նա արդէն մեռած էր և երկրի պետը Սմբատ Բագրատունին էր։ Մհարոյ վարդապետի կարծիքով ևս հրկու Գրիգորները նոյն անձն են։

Այսպիսով մեծ և փոքր Սոկրատներին փոխադրած յարաբերութիւնները պարզուած կարելի է համարել։

Մեծը թարգմանուած է Պոլսում 696 թուին Փիլոնի ձեռքով, փոքրը խմբագրւած է Մեծից Յակոբ Ուռուայեցու աշխատութեամբ ԺԲ. դարում։

Բոյիւնել

ՊՐՕՅ. Ն. ԱՒՈՆԾ

Քարոզ լսելու համար եկեղեցի եկողը իրեն հետ կը բերէ իր մասնաւոր տպաւորութեանց մանրուրդ դրամը, ոսկեղէնով վերածելու համար զայն հոն. զգո՛ւ, չըլլայ որ հակառակը պատահի։